ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան

29.08.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ԳԲԽ-ԱՄ-2017/27

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) քննելով «Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ի կողմից 18.08.2017թ. ներկայացված բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2017/27 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. «Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ուղղված 18.08.2017թ. բողոքով հայտնել է, որ ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից ՀՀ Կոտայքի մարզի ք. Աբովյանի հայ և ռուս ժողովուրդների բարեկամության թանգարանի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 2017թ. մարտի 27-ի թիվ 1 որոշմամբ կազմակերպվել է «ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-

17/6» ծածկագրով բաց ընթացակարգը (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ն:

«ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/6» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 08.08.2017թ. ժամը 16:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 9 արձանագրության 2.1-րդ կետի համաձայն՝ «ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/6» ծածկագրով բաց ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը՝ «Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ն հրավերով սահմանված ժամկետում ներկայացրել է որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը:

Նույն արձանագրության 2.2-րդ կետի համաձայն՝ մասնակցի կողմից որպես հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած համանման պայմանագրերից.

- Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Հասրաթյան փողոցի թիվ 40/5 հասցեում 3 հարկանի շենքի կառուցման 06.05.2013թ. կնքված պայմանագրով նախատեսված աշխատանքները ամբողջությամբ, ինչպես նաև 24.08.2013թ. կնքված ԿՊ 13 պայմանագրով նախատեսված աշխատանքների մի մասը կատարվել են 2013թ. ընթացքում, հետևաբար՝ աշխատանքների կատարման ժամկետները չեն համապատասխանում հրավերով սահմանված ժամկետին, ԿՊ 13 պայմանագրով նախատեսված աշխատանքների հանձնման-ընդունման արձանագրությունները կնքված չեն կապալառուի կողմից.

- Բացակայում է կապալառուի աշխատանքների կատարման 24.05.2016թ. կնքված «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/93-3» պայմանագրի հավելված 4.1-ն, ինչպես նաև թիվ 4 և 5 հանձնման-ընդունման արձանագրություններով աշխատանքները կատարվել են պայմանագրով սահմանված ժամկետի խախտումով (ուշացումով).

- Բացակայում է կապալային աշխատանքների կատարման «ԱՄ-ԲԸ-ԱՇՁԲ-15/1-ԱՄ-4» պայմանագրի թիվ 4 հավելվածը, ինչպես նաև պայմանագրի և կից հավելվածների կնքման ամսաթիվը և ամիսը:

Նույն արձանագրության 2.3-րդ կետի համաձայն՝ մասնակցի կողմից որպես հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացված համանման պայմանագրերի շրջանակներում կատարված

աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը) գումարային արտահայտությամբ, պակաս է տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից:

Նույն արձանագրության 2.4-րդ կետի համաձայն՝ տեխնիկական միջոցների մասին տեղեկանքում նշված չեն էքսկավատորի և ամբարձիչի պետհամարանիշները:

Նույն արձանագրության 2.5-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշել է ծանուցել «Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրում շտկել անհամապատասխանությունները:

«Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ն իր 09.08.2017թ. գրությամբ գնահատող հանձնաժողովին հայտնել է հետևյալը. «Ի պատասխան հանձնաժողովի 08.08.2017թ. N 9 արձանագրության 2.2-րդ կետում նշված նմանատիպ աշխատանքների ժամկետների, ապա ցանկանում ենք նշել, որ գնումների գործընթացի կազմակերպման մասին թիվ 168-Ն որոշման հավելված 1-ով հաստատված կարգի 8 գլխի 64-րդ կետի 1-ին ենթակետի և 65-րդ կետի համաձայն՝ խոսքը գնում է ոչ թե կնքված պայմանագրի ամսաթվի, այլ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացրած պայմանագրերի մասին, որի համար պահանջում են հանձնման-ընդունման արձանագրությունները և հարկային հաշիվները: Ելնելով գնահատող հանձնաժողովի կողմից մատնանշված ժամկետների տրամաբանությունից, ստացվում է, որ եթե կազմակերպությունն ունի ծավալուն աշխատանքների պայմանագիր, որի իրականացման համար նախատեսված է 4 կամ 5 տարի ժամանակահատված, աշխատանքները ավարտելուց հետո, քանի որ մինչև ավարտելը չի կարող ներկայացնել որպես ավարտված նմանատիպ աշխատանք, իսկ ավարտվելուց հետո գերազանցում է նախորդ երեք տարվա ժամանակահատվածը, չի կարող ներկայացնել: Այսինքն ստացվում է, որ այդ հսկայածավալ աշխատանքը նա չի կարող ներկայացնել նմանատիպ աշխատանքների ցանկում, ինչը չի բխում օրենքի նմանատիպ աշխատանքների ներկայացման պահանջից և տրամաբանությունից: «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/93-3» պայմանագրում 4.1 հավելվածը գոյություն չի ունեցել, իսկ ինչ վերաբերվում է 4-րդ և 5-րդ արձանագրություններին, քանի որ աշխատանքների ծավալների իրականացումը խոչընդոտվել է պատվիրատուի կողմից, հետևաբար ունենք լրացուցիչ համաձայնագիր՝

ժամկետի երկարացման վերաբերյալ, որի պատճենը ներկայացնում ենք: Ինչպես նաև ներկայացնում ենք «ԱՄ-ԲԸԱՇՁԲ-15/1-ԱՄ-4» պայմանագրի 4-րդ հավելվածի և մնացած հավելվածների պատճենները: Ուղարկում ենք նաև հավելված 5.1-ի ճշտված օրինակը»:

Գնահատող հանձնաժողովի 10.08.2017թ. ժամը 16:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 10 արձանագրության 2.1-րդ կետի համաձայն՝ «Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ն որպես արձանագրված անհամապատասխանությունների շտկում ներկայացրել է.

-24.08.2013թ. կնքված ԿՊ 13 պայմանագրով կատարված աշխատանքների կապալառուի կողմից կնքված հանձնման-ընդունման արձանագրությունները.

-24.05.2016թ. կնքված «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/93-3» պայմանագրի աշխատանքների կատարման ժամկետը երկարաձգելու մասին կողմերի միջև 25.08.2016թ. կնքված համաձայնագիր թիվ 1-ը (համաձայնագիրը կնքվել է օրենքով սահմանված ժամկետի խախտմամբ),

- Կապալային աշխատանքների կատարման «ԱՄ-ԲԸ-ԱՇՁԲ-15/1-ԱՄ-4» պայմանագրի ու կից հավելվածների կնքման ամսաթիվը և ամիսը նշված տարբերակը,

-Տեխնիկական միջոցների մասին տեղեկանքի (Հավելված 5.1) ճշտված տարբերակը:

Ըստ նույն արձանագրության 2.2-րդ կետի՝ «Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ի կողմից ներկայացրած.

-Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Հասրաթյան փողոցի թիվ 40/5 հասցեում 3 հարկանի շենքի կառուցման 06.05.2013թ. կնքված պայմանագրով (ընդհանուր գինը՝ 22 016 766) նախատեսված աշխատանքները ամբողջությամբ կատարվել են 2013թ.,

-24.08.2013թ. կնքված ԿՊ 13 պայմանագրով (ընդհանուր գինը՝ 41 239 160) նախատեսված աշխատանքներից ընդունելի են միայն 18 013 861 ՀՀ դրամի աշխատանքները, քանի որ մյուս մասը կատարվել է 2013թ. ընթացքում, հետևաբար՝ աշխատանքների կատարման ժամկետները չեն համապատասխանում հրավերով սահմանված ժամկետին:

Նույն արձանագրության 3.1-րդ կետի համաձայն՝ «Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ի հայտը գնահատվել է անբավարար և մերժվել է այն հիմնավորմամբ, որ մասնակցի կողմից որպես հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում

պատշաճ ձևով իրականացրած համանման պայմանագրերի շրջանակներում կատարված աշխատանքների ծավալների հանրագումարը պակաս է հրավերով սահմանված չափից:

«Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ն, ի պատասխան 10.08.2017թ. ժամը 16:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 10 արձանագրության, գնահատող հանձնաժողովին ուղղված իր 12.08.2017թ. գրությամբ հայտնել է հետևյալը. ««ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/93-3» պայմանագրի աշխատանքների կատարման ժամկետը երկարաձգելու մասին կողմերի միջև 25.08.2016թ. կնքված համաձայնագրում հստակ տրված է հղումը, որի հիման վրա կնքվել է պայմանագիրը և համաձայնագիրը: Դուք չեք կարող նշել, թե օրենքի որ հոդվածի խախտմամբ է կնքվել համաձայնագիրը: Ինչ վերաբերում է Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Հասրաթյան փողոցի թիվ 40/5 հասցեում 3 հարկանի շենքի կառուցման 06.05.2013թ կնքված պայմանագրով կատարված աշխատանքների ավարտին, ապա 3-րդ արձանագրության գլխադիրում տեղի է ունեցել վրիպակ, աշխատանքները ավարտվել են ոչ թե 20.03.2013թ.-ին, այլ 20.02.2014թ., ինչն էլ վկայում է նույն արձանագրության աղյուսակում նշված աշխատանքների կատարման ժամկետը, որը արտացոլված է նաև 10.03.2014թ. դուրս գրված հարկային հաշիվում (մատակարարման ամսաթիվը 20.02.2014թ.) և բացի այդ, թիվ 3 արձանագրության ամսաթիվը չի կարող ավելի վաղ լինել, քան թիվ 2 կամ թիվ 1 արձանագրությունների ամսաթվերը...»:

«Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ն վկայակոչել է «Գնումների մասին» ՀՕ-21-Ն օրենքի (ուժի մեջ է մտել 25.04.2017թ.) 57-րդ հոդվածի 3-րդ մասը, որի համաձայն՝ նույն օրենքի պահանջները չեն տարածվում մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելն սկսած և չդադարած, ինչպես նաև կնքված և գործող գնման գործարքների վրա, իսկ դրանց հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների կնքման պահին գործող իրավական ակտերով:

Ուստի «Գնումների մասին» ՀՕ-206-Ն օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը.

2) մասնագիտական փորձառություն.

3) տեխնիկական միջոցներ.

4) ֆինանսական միջոցներ.

5) աշխատանքային ռեսուրսներ:

Նույն օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 65-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ մասնակիցների օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

Նույն կարգի 65-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որպես սույն պարբերության 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշի հիմնավորող փաստաթուղթ ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

«ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/6» ծածկագրով գնման բաց ընթացակարգի հրավերի 2.3-րդ կետի համաձայն՝

- Մասնակցի՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) Մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն (Հավելված 3.1), որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում Մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում Մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից: Նմանատիպ են համարվում սույն հրավերով պահանջվող լիցենզիայի (ներդիրների) շրջանակներում բնակելի, հասարակական և արտադրական շենքերի ու շինությունների շինարարական աշխատանքների (այդ թվում հիմնանորոգման-վերակառուցման) նախկինում կատարված պայմանագրերը:

2) առաջին տեղը զբաղեցրած Մասնակիցը որպես սույն պարբերության 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշի հիմնավորող փաստաթուղթ ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ

ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

4) Մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն պարբերությամբ նախատեսված պահանջները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 423-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորությունը լրիվ կամ մասնակի դադարում է օրենքով, այլ իրավական ակտերով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 424-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պատշաճ կատարումը դադարեցնում է պարտավորությունը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 441-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ օրենքով կամ պայմանագրով կարող է նախատեսվել, որ պայմանագրի գործողության ժամկետի ավարտով դադարում են կողմերի պարտավորությունները: Պայմանագիրը, որում բացակայում է նման պայմանը, գործում է մինչև դրանով որոշված պարտավորության կատարման ավարտը:

Նույն օրենսգրքի 468-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի փոփոխման կամ լուծման համաձայնությունը կնքվում է այն ձևով, ինչով պայմանագիրը, եթե այլ բան չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պայմանագրից կամ գործարար շրջանառության սովորույթներից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 706-րդ հոդվածի համաձայն՝ կապալի պայմանագրում նշվում են աշխատանքը կատարելու սկզբնական և վերջնական ժամկետները:

Նույն օրենսգրքի 709-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պատվիրատուն պարտավոր է պայմանավորված գինը կապալառուին վճարել աշխատանքի արդյունքները վերջնական հանձնելուց հետո, պայմանով, եթե աշխատանքը կատարված է պատշաճ և պայմանավորված ժամկետում կամ ժամկետից շուտ՝ պատվիրատուի համաձայնությամբ,

եթե կատարվող աշխատանքի կամ դրա առանձին փուլերի նախնական վարձատրություն նախատեսված չէ կապալի պայմանագրով:

- Գնահատող հանձնաժողովի 10.08.2017թ. ժամը 16:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 10 արձանագրության 2.1-րդ կետով արձանագրվել է, որ «Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ի կողմից ներկայացվել է 24.05.2016թ. կնքված «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/93-3» պայմանագրի աշխատանքների կատարման ժամկետը երկարաձգելու մասին կողմերի միջև 25.08.2016թ. կնքված համաձայնագիր թիվ 1-ը: Միևնույն ժամանակ գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ նշված համաձայնագիրը կնքվել է օրենքով սահմանված ժամկետի խախտմամբ: Այս կապակցությամբ Ընկերությունը նշել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 468-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի փոփոխման կամ լուծման համաձայնությունը կնքվում է այն ձևով, ինչով պայմանագիրը, եթե այլ բան չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պայմանագրից կամ գործարար շրջանառության սովորույթներից: Ուստի «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/93-3» պայմանագրի աշխատանքների կատարման ժամկետը երկարաձգելու մասին համաձայնագիրը կողմերը կնքել են՝ ղեկավարվելով օրենսգրքի համապատասխան դրույթներով: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է նշել, որ գնահատող հանձնաժողովը չնայած նման գնահատական է տվել «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/93-3» պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրին, այնուամենայնիվ նշված պայմանագիրը ամբողջ ծավալով, 10.08.2017թ. ժամը 16:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 10 արձանագրության 2.2-րդ կետով համարելի է ընդունելի:

- Ինչպես արդեն նշվել է, ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 65-րդ կետի 1-ին ենթակետի և վիճարկվող ընթացակարգի հրավերի 2.3-րդ կետի համաձայն՝ մասնակիցների Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝ հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր (նախկինում կատարված պայմանագիր): Ընդ որում, մասնակիցը որպես սահմանված որակավորման չափանիշի

հիմնավորող փաստաթուղթ ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

Վերոհիշյալից ուղղակիորեն բխում է, որ խոսքը գնում է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացված և ավարտված պայմանագրի (ոչ առանձին աշխատանքների) մասին: Այսինքն, որպես համանման ներկայացրած ամբողջ պայմանագիրը (այլ ոչ թե պայմանագրում նախատեսված առանձին աշխատանքներ) պետք է ավարտված լինի հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում: Մինչդեռ գնահատող հանձնաժողովի կողմից օրենսդրությամբ պահանջվող կատարված և ավարտված պայմանագիրը անթույլատրելիորեն նույնականացվել է այդ պայմանագրի ընդամենը բաղադրատարր հանդիսացող առանձին աշխատանքների հետ, և արդյունքում ներկայացված ավարտված պայմանագրերը բաղդատվել են մասերի:

Միևնույն ժամանակ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 424-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պատշաճ կատարումը դադարեցնում է պարտավորությունը, իսկ օրենսգրքի 441-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ օրենքով կամ պայմանագրով կարող է նախատեսվել, որ պայմանագրի գործողության ժամկետի ավարտով դադարում են կողմերի պարտավորությունները: Պայմանագիրը, որում բացակայում է նման պայմանը, գործում է մինչև դրանով որոշված պարտավորության կատարման ավարտը:

Նույն օրենսգրքի 706-րդ հոդվածի համաձայն՝ կապալի պայմանագրում նշվում են աշխատանքը կատարելու սկզբնական և վերջնական ժամկետները:

Նույն օրենգրքի 709-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պատվիրատուն պարտավոր է պայմանավորված գինը կապալառուին վճարել աշխատանքի արդյունքները վերջնական հանձնելուց հետո, պայմանով, եթե աշխատանքը կատարված է պատշաճ և պայմանավորված ժամկետում կամ ժամկետից շուտ՝ պատվիրատուի համաձայնությամբ,

եթե կատարվող աշխատանքի կամ դրա առանձին փուլերի նախնական վարձատրություն նախատեսված չէ կապալի պայմանագրով:

ա) 24.08.2013թ. կնքված թիվ ԿՊ 13 շինարարական կապալի պայմանագրով (1.1 կետ) կապալառուն՝ «Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ն պարտավորվել է կառուցել Երևան քաղաքի Դավիթաշեն վարչական շրջանի Մելքումովի փողոցի հ.24/46 հասցեում երեք հարկանի շինության (նկուղ և երկու հարկ): Ըստ նույն պայմանագրի 4.1 կետի՝ պայմանագիրը գործելու է մինչև պատվիրատուի կողմից այդ աշխատանքի ընդունումը: Պայմանագրի կողմերի միջև 24.07.2014թ. ստորագրած հանձնման-ընդունման արձանագրությամբ պատվիրատուի կողմից պայմանագրով նախատեսված աշխատանքը ընդունվել է և 22.09.2014թ. պատվիրատուի կողմից դուրս է գրվել համապատասխան հաշիվ-ապրանքագիրը: Վերոհիշյալ երկու փաստաթղթերը վկայում են, որ պայմանագրով որոշված պարտավորությունը (համապատասխան շինարարական աշխատանքների կատարումը) և, համապատասխանաբար պայմանագիրը գործել է մինչև դրա կատարման ավարտը, և այդ պարտավորությունը դադարեցվել է պատշաճ կատարմամբ 24.07.2014թ.՝ ըստ օրենսգրքի 424-րդ հոդվածի 1-ին մասի: Այսպիսով, ըստ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 441-րդ հոդվածի 3-րդ մասի, թիվ ԿՊ 13 շինարարական կապալի պայմանագրով նախատեսված աշխատանքը կատարելու վերջնական ժամկետն է հանդիսացել 24.07.2014թ.:

Վերոհիշյալ փաստերը վկայում են, որ 24.08.2013թ. կնքված թիվ ԿՊ 13 շինարարական կապալի պայմանագիրը հանդիսանում է «Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ի կողմից հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացված և ավարտված (2014թ.) պայմանագիր, ինչն էլ համապատասխանում է ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 65-րդ կետի 1-ին ենթակետի և վիճարկվող ընթացակարգի հրավերի 2.3-րդ կետի պահանջներին, ուստի այն ամբողջությամբ պետք է ընդունվեր պատվիրատուի կողմից:

բ) Նույն տրամաբանությունը տարածվում է նաև 06.05.2013թ. կնքված շինարարական կապալի պայմանագրի վրա: Վերոհիշյալ պայմանագրի համաձայն (1.2 կետ)՝ «Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ն պարտավորվել է իրականացնել Երևան քաղաքի

Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Հասրաթյան փողոցի թիվ 40/5 հասցեում 3 հարկանի շենքի կառուցումը: Ըստ նույն պայմանագրի 5.1 կետի՝ պայմանագիրը գործելու է մինչև պատվիրատուի կողմից այդ աշխատանքի ընդունումը: Պայմանագրի կողմերի միջև 20.02.2014թ. ստորագրած հանձնման-ընդունման արձանագրությամբ պատվիրատուի կողմից պայմանագրով նախատեսված աշխատանքը ընդունվել է և 10.03.2014թ. դուրս է գրվել համապատասխան հաշիվ-ապրանքագիրը: Վերոհիշյալ երկու փաստաթղթերը վկայում են, որ պայմանագրով որոշված պարտավորությունը (համապատասխան շինարարական աշխատանքների կատարումը), և համապատասխանաբար պայմանագիրը, գործել է մինչև դրա կատարման ավարտը, և այդ պարտավորությունը դադարեցվել է պատշաճ կատարմամբ 20.02.2014թ.՝ ըստ օրենսգրքի 424-րդ հոդվածի 1-ին մասի: Այսպիսով, ըստ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 441-րդ հոդվածի 3-րդ մասի, 06.05.2013թ. կնքված շինարարական կապալի պայմանագրով նախատեսված աշխատանքը կատարելու վերջնական ժամկետն է հանդիսանում 20.02.2014թ.:

Վերոհիշյալ փաստերը վկայում են, որ 06.05.2013թ. կնքված շինարարական կապալի պայմանագիրը նույնպես հանդիսանում է «Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ի կողմից հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացված և ավարտված (2014թ.) պայմանագիր, ինչն էլ համապատասխանում է ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 65-րդ կետի 1-ին ենթակետի և վիճարկվող ընթացակարգի հրավերի 2.3-րդ կետի պահանջներին, ուստի այն ամբողջությամբ պետք է ընդունվեր պատվիրատուի կողմից:

Միևնույն ժամանակ Ընկերությունը բողոքով նշել է, որ 3-րդ արձանագրության գլխադիրում տեղի է ունեցել վրիպակ (գլխադիրում նշված է 2013թ.), աշխատանքները ավարտվել են ոչ թե 20.03.2013թ.-ին, այլ 20.02.2014թ., ինչն էլ վկայում է նույն արձանագրության աղյուսակում նշված աշխատանքների կատարման ժամկետը, որը արտացոլված է նաև 10.03.2014թ. դուրս գրված հարկային հաշիվում (մատակարարման ամսաթիվը 20.02.2014թ.) և բացի այդ, թիվ 3 արձանագրության ամսաթիվը չի կարող ավելի վաղ լինել, քան թիվ 2 կամ թիվ 1 արձանագրությունների ամսաթվերը»:

Ելնելով վերոգրայլից՝ «Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ն գտնում է, որ գնահատող հանձնաժողովն, անբավարար գնահատելով և մերժելով ընկերության հայտը, խախտել է Օրենքի 31-րդ հոդվածի և ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 65-րդ կետի 1-ին ենթակետի և վիճարկվող ընթացակարգի հրավերի 2.3-րդ կետի պահանջները:

Հաշվի առնելով վերը շարադրվածը՝ Ընկերությունը Խորհրդին բողոքով խնդրել է՝

1.Կիրառել ժամանակավոր միջոց և կասեցնել ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի կողմից ՀՀ Կոտայքի մարզի ք. Աբովյանի հայ և ռուս ժողովուրդների բարեկամության թանգարանի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/6» ծածկագրով գնման բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի ցանկացած որոշման կայացում և գործողության իրականացում, այդ թվում նաև պայմանագիր կնքելու որոշման ընդունումը և իրականացումը, որը Խորհրդի 23.08.2017թ. միջանկյալ որոշմամբ բավարարվել է:

2. Դադարեցնել գնահատող հանձնաժողովի 10.08.2017թ. ժամը 16:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 10 արձանագրության 3.1-րդ կետով «Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ի հայտը անբավարար գնահատելու և մերժելու մասին որոշումը և որպես հետևանք՝ նաև 3.2-րդ կետով կայացրած որոշումը:

3. Դադարեցնել գնահատող հանձնաժողովի 10.08.2017թ. ժամը 16:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 10 արձանագրության 2.2-րդ կետում ներկայացված աղյուսակի նախավերջին և վերջին տողերի «Պայմանագրի ընդհանուր գնից հրավերով սահմանված ժամկետում կատարված աշխատանքների գինը» սյունակում ներկայացրած և կայացրած որոշումները՝ համապատասխանաբար 24.08.2013թ. կնքված Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանի Մելքումովի փողոցի հ.24/46 հասցեում երեք հարկանի շինության կառուցման աշխատանքների թիվ ԿՊ 13 պայմանագրի և Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Հասրաթյան փողոցի թիվ 40/5 հասցեում 3 հարկանի շենքի կառուցման 06.05.2013թ. կնքված պայմանագրի մասերով:

4. Որպես հետևանք՝ դադարեցնել 08.08.2017թ. ժամը 16:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 9 արձանագրության 2.2-րդ և 2.3-րդ կետերով կայացրած որոշումները՝ 24.08.2013թ. կնքված Երևան քաղաքի Դավիթաշեն վարչական շրջանի Մելքումովի փողոցի հ.24/46

հասցեում երեք հարկանի շինության կառուցման աշխատանքների թիվ ԿՊ-13 պայմանագրի և Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Հասրաթյան փողոցի թիվ 40/5 հասցեում 3 հարկանի շենքի կառուցման 06.05.2013թ. կնքված պայմանագրի մասերով հրավերով սահմանված ժամկետներին չհամապատասխանելու վերաբերյալ:

5. Պայմանագիր կնքված լինելու դեպքում՝ «ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/6» ծածկագրով գնման բաց ընթացակարգը հայտարարել ապօրինի:

«Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 23.08.2017թ. ժամը 11:00-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. <u>ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեն Խորհրդին ուղղված 22.08.2017թ. թիվ 02/1.6/5262-17 գրությամբ ներկայացրել է «ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/6» ծածկագրով ընթացակարգին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը:

Վերոհիշյալ գրությամբ Պատվիրատուն հայտնել է, որ ՀՀ ԿԱ պետական կոմիտեի կողմից ՀՀ Կոտայքի մարզի Աբովյան քաղաքի հայ և ռուս ժողովուրդների բարեկամության թանգարանի հիմնանորոգման աշխատանքների գնման համար «ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/6» ծածկագրով կազմակերպված գնման գործընթացին մասնակցել է նաև «Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ն:

Հայտերի գնահատման արդյունքում Ընկերությունը ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից և հրավերով սահմանված ժամկետում ներկայացրել է որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը: Ներկայացրած փաստաթղթերում առկա անհամապատասխանություն-ները շտկելու համար՝ համաձայն ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 51-րդ կետի՝ հանձնաժողովը ծանուցել է առաջին տեղ զբաղեցրած մասնակցին՝ «Տրանսունիվերսալ»

ՓԲԸ-ին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

Հրավերով սահմանված ժամկետում «Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ն, որպես վերոհիշյալ անհամապատասխանության շտկում, ներկայացրել է փաստաթղթեր, որոնք նույնպես չեն բավարարել հրավերի պահանջներին, մասնավորապես՝ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում համանման (նմանատիպ) պայմանագրերի շրջանակներում պատշաճ ձևով կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը) գումարային արահայտությամբ պակաս է տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, ինչը գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում է: Համաձայն Կարգի 2-րդ կետի 2-րդ ենթակետի՝ «Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ի հայտը գնահատող հանձնաժողովի որոշմամբ մերժվել է, որը հանգեցրել է գնման գործընթացին «Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ի հետագա մասնակցության դադարեցմանը:

Պատվիրատուն գտնում է, որ Ընկերության բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 23.08.2017թ. ժամը 11:00-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը, ինչպես նաև հայտնել, որ Ընկերության կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերում առկա են եղել բազմաթիվ թերություններ, ուստի գնահատող հանձնաժողովը Ընկերությանը ծանուցել է արձանագրված թերությունները շտկելու վերաբերյալ: Ընկերության կողմից անհամապատասխանությունների որոշ մասը սահմանված ժամկետում շտկվել է, սակայն ներկայացվել են համանման 4 պայմանագրեր, որոնցից թիվ ԿՊ 13 պայմանագիրն ամբողջությամբ կատարվել է 2013թ., քանի որ վերջինիս հանձնման-ընդունման թիվ 3 արձանագրության մեջ նույնպես նշված է, որ աշխատանքները կատարվել են 2013թ. ընթացքում, իսկ մյուս պայմանագրով նախատեսված աշխատանքների մի մասը կատարվել է 2013թ. ընթացքում, իսկ մյուս մասը՝ 2014թ. ընթացքում: Մինչդեռ ընկերության կողմից հայտը ներկայացվել է 2017թ., ուստի գնահատող հանձնաժողովը որպես հայտը ներկայացնելուն և դրան նախորդող

երեք տարիների ընթացքում կատարված աշխատանք դիտարկել է 2014թ. ընթացքում կատարված աշխատանքը:

Ինչ վերաբերում է Ընկերության կողմից որպես համանման ներկայացված՝ «Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ի և Երևանի քաղաքապետարանի միջև կնքված պայմանագրին, ապա վերջինիս համաձայն՝ պայմանագրի ժամկետը նախատեսված է եղել մինչև 25.08.2016թ., մինչդեռ կողմերի միջև 25.08.2016թ. կնքվել է պայմանագրի ժամկետը երկարաձգելու մասին համաձայնագիր, այսինքն պայմանագրի ժամկետը ավարտվելուց հետո միայն:

4. ԳԲԽ-ԱՄ-2017/27 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-ԱՄ-2017/27 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի կողմից ՀՀ Կոտայքի մարզի ք. Աբովյանի հայ և ռուս ժողովուրդների բարեկամության թանգարանի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/6» ծածկագրով բաց ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել «Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ն:

2. Ընկերությունը հայտի թիվ 4 հավելվածով ներկայացրել է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած գնային առաջարկ, որի ընդհանուր գինը կազմել է 203 500 000 ՀՀ դրամ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 31.07.2017թ. ժամը 15:30-ի նիստի թիվ 8 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ն ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից, որին սահմանված կարգով ծանուցվել է որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 08.08.2017թ. ժամը 16:00-ի նիստի թիվ 9 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ի կողմից որպես հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացված համանման (նմանատիպ) պայմանագրերից.

- Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Հասրաթյան փողոցի թիվ 40/5 հասցեում 3 հարկանի շենքի կառուցման 06.05.2013թ. կնքված պայմանագրով նախատեսված աշխատանքներն ամբողջությամբ, ինչպես նաև 24.08.2013թ. կնքված ԿՊ 13 պայմանագրով նախատեսված աշխատանքների մի մասը կատարվել են 2013թ. ընթացքում, հետևաբար աշխատանքների կատարման ժամկետները չեն համապատասխանում հրավերով սահմանված ժամկետին, ԿՊ 13 պայմանագրով նախատեսված աշխատանքների հանձնման-ընդունման արձանագրությունները կնքված չեն կապալառուի կողմից.
- Բացակայում է կապալային աշխատանքների կատարման 24.05.2016թ. կնքված N «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/93-3» պայմանագրի հավելված 4.1-ն, ինչպես նաև N 4 և N 5 հանձնման-ընդունման արձանագրություններով աշխատանքները կատարվել են պայմանագրով սահմանված ժամկետի խախտումով (ուշացումով).
- Բացակայում է կապալային աշխատանքների կատարման N «ԱՄ ԲԸ-ԱՇՁԲ-15/1-ԱՄ-4» պայմանագրի N 4 հավելվածը, ինչպես նաև պայմանագրի և կից հավելվածների կնքման ամսաթիվը և ամիսը.
- Ընկերության կողմից որպես հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) պայմանագրերի շրջանակներում կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը) գումարային արտահայտությամբ, պակաս է տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում Ընկերության ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից.
- Տեխնիկական միջոցների մասին տեղեկանքում (Հավելված 5.1) նշված չեն էքսկավատորի և ամբարձիչի պետհամարանիշները:

5. Հաշվի առնելով «Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերում արձանագրված

թերությունները, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը սահմանված կարգով ծանուցել է Ընկերությանը մեկ աշխատանքային օրվա ընթացքում անհամապատասխանությունները շտկելու անհրաժեշտության վերաբերյալ:

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.08.2017թ. ժամը 16:00-ի նիստի թիվ 10 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է անհամապատասխանությունների շտկում, մասնավորապես Ընկերությունը ներկայացրել է՝

- 24.08.2013թ. կնքված ԿՊ 13 պայմանագրով կատարված աշխատանքների՝ կապալառուի կողմից կնքված հանձնման-ընդունման արձանագրությունները.
- 24.05.2016թ. կնքված «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/93-3» պայմանագրի աշխատանքների կատարման ժամկետը երկարաձգելու մասին կողմերի միջև 25.08.2016թ. կնքված համաձայնագիր N 1 (համաձայնագիրը կնքվել է օրենքով սահմանված ժամկետի խախտմամբ),
- Կապալային աշխատանքների կատարման «ԱՄ-ԲԸ-ԱՇՁԲ-15/1-ԱՄ-4» պայմանագրի ու կից հավելվածների կնքման ամսաթիվը և ամիսը նշված տարբերակը.
- Տեխնիկական միջոցների մասին տեղեկանքի (Հավելված 5.1) ճշտված տարբերակը.

7. Վերոհիշյալ արձանագրության 2.2-րդ կետով արձանագրվել է, որ «Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ի կողմից ներկայացրած՝ որպես հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացված համանման (նմանատիպ) պայմանագրերի շրջանակներում կատարված աշխատանքների ծավալները (գները) հետևյալն են.

Պայմանագրի համարը, կնքման օրը, ամիսը, տարին	Գնման առարկայի անվանումը	Պայմանագրի ընդհանուր գինը /ՀՀ դրամ/	Պայմանագրի ընդհանուր գնից հրավերով սահմանված ժամկետում կատարված աշխատանքի գինը /ՀՀ դրամ/
«ԱՄ-ԲԸ-ԱՇՁԲ-15/1-ԱՄ-4» 27.05.2015թ.	Դարակերտ համայնքի դպրոցի հիմնանորոգման աշխատանքներ	11 429 832	11 429 832
«ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/93-	Երևան քաղաքի	32 993 441	32 993 441

3» 25.05.2016թ.	Արաբկիր վարչական շրջանի հ. 25 մանկապարտեզի հիմնանորոգման աշխատանքներ		
ԿՊ 13 24.07.2013թ.	Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանի Մելքումովի փողոցի հ. 24/46 հասցեում երեք հարկանի շինության (նկուղ և երկու հարկ) կառուցման աշխատանքներ	41 239 160	18 013 861 (տարբերության չափով աշխատանքները կատարվել են 2013թ.)
06.05.2013թ.	Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Հասրաթյան փողոցի թիվ 40/5 հասցեում 3 հարկանի շենքի կառուցման աշխատանքներ	22 016 766	(աշխատանքներն ամբողջովին կատարվել են 2013թ.)
		Ընդամենը (հանրագումարը)	62 437 134

8. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.08.2017թ. ժամը 16:00-ի նիստի թիվ 10 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ի հայտը գնահատվել է անբավարար և մերժվել այն հիմնավորմամբ, որ Ընկերության կողմից որպես հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացված համանման (նմանատիպ) պայմանագրերի շրջանակներում կատարված աշխատանքների ծավալների հանրագումարը պակաս է հրավերով սահմանված չափից:

9. Ընկերության կողմից որպես «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ ներկայացվել է՝

ա) «Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ի և ՀՀ Արարատի մարզպետարանի միջև 27.05.2015թ. կնքված թիվ «ԱՄ-ԲԸ-ԱՇՁԲ-15/1-ԱՄ-4» կապալային աշխատանքների կատարման

պայմանագրի (ընդհանուր գինը ըստ պայմանագրի՝ 11 429 832 ՀՀ դրամ), դրա հաշիվ-ապրանքագրերի և հանձնման-ընդունման արձանագրությունների պատճենները.

բ) «Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ի և Երևանի քաղաքապետարանի միջև 24.05.2016թ. կնքված թիվ «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/93-3» կապալային աշխատանքների կատարման պայմանագրի (ընդհանուր գինը ըստ պայմանագրի՝ 32 993 441.0 ՀՀ դրամ), պայմանագրի մեջ փոփոխություն կատարելու մասին կողմերի միջև 25.08.2017թ. կնքված թիվ 1 համաձայնագրի, հաշիվ-ապրանքագրերի, հանձնման-ընդունման արձանագրությունների, կատարողական ակտերի պատճենները.

գ) «Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ի և քաղաքացի Կարեն Յավրյանի միջև 24.07.2013թ. կնքված շինարարական կապալի թիվ ԿՊ 13 պայմանագրի (ընդհանուր գինը ըստ պայմանագրի՝ 41 239 160 ՀՀ դրամ) դրա հաշիվ-ապրանքագրերի և հանձնման-ընդունման ակտերի պատճենները.

դ) «Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ի և քաղաքացի Միքայել Շադոյանի միջև 06.05.2013թ. կնքված շինարարական կապալի պայմանագրի (ընդհանուր գինը ըստ պայմանագրի՝ 22 016 766 ՀՀ դրամ) դրա հաշիվ-ապրանքնագրերի և հանձնման-ընդունման արձանագրությունների պատճենները.

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով «Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ի 18.08.2017թ. բողոքը, ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի 22.08.2017թ. թիվ 02/1.6/5262-17 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 423-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորությունը լրիվ կամ մասնակի դադարում է օրենքով, այլ իրավական ակտերով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով:

Օրենսգրքի 424-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պատշաճ կատարումը դադարեցնում է պարտավորությունը:

Օրենսգրքի 441-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի համաձայն՝

1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում և կողմերի համար պարտադիր է դառնում կնքելու պահից:

3.Օրենքով կամ պայմանագրով կարող է նախատեսվել, որ պայմանագրի գործողության ժամկետի ավարտով դադարում են կողմերի պարտավորությունները:

Պայմանագիրը, որում բացակայում է նման պայմանը, գործում է մինչև դրանով որոշված պարտավորության կատարման ավարտը:

Նույն օրենսգրքի 468-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի փոփոխման կամ լուծման համաձայնությունը կնքվում է այն ձևով, ինչով պայմանագիրը, եթե այլ բան չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պայմանագրից կամ գործարար շրջանառության սովորույթներից:

Օրենսգրքի 700-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կապալի պայմանագրով մի կողմը (կապալառուն) պարտավորվում է մյուս կողմի (պատվիրատուի) առաջադրանքով կատարել որոշակի աշխատանք և դրա արդյունքը սահմանված ժամկետում հանձնել պատվիրատուին, իսկ պատվիրատուն պարտավորվում է ընդունել աշխատանքի արդյունքը և վարձատրել դրա համար:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝ մասնագիտական փորձառություն:

Նույն օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 65-րդ կետի 1-ին, 3-րդ և 4-րդ ենթակետերի համաձայն՝ Մասնակիցների, օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից.

2)...»

3) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը՝ որպես սույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը.

4) մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:

Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետը սահմանում է, որ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, իսկ ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ

նախատեսված փաստաթուղթը: Նույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած մասնակցին:

Կարգի 51-րդ կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացրած որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 52-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի կողմից ՀՀ Կոտայքի մարզի ք. Աբովյանի հայ և ռուս ժողովուրդների բարեկամության թանգարանի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/6» ծածկագրով բաց ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել «Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 31.07.2017թ. ժամը 15:30-ի նիստի թիվ 8 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ն ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից, որին սահմանված կարգով ծանուցվել է որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

Ընկերությունը սահմանված կարգով ներկայացրել է որակավորման չափանիշերը հիմնավորող փաստաթղթերը, որոնցում սակայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել են անհամապատասխանություններ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.08.2017թ. ժամը 16:00-ի նիստի թիվ 10 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է անհամապատասխանությունների շտկում, մասնավորապես Ընկերությունը ներկայացրել է՝

- 24.08.2013թ. կնքված ԿՊ-13 պայմանագրով կատարված աշխատանքների՝ կապալառուի կողմից կնքված հանձնման-ընդունման արձանագրությունները.
- 24.05.2016թ. կնքված «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/93-3» պայմանագրի աշխատանքների կատարման ժամկետը երկարաձգելու մասին կողմերի միջև 25.08.2016թ. կնքված համաձայնագիր N 1 (համաձայնագիրը կնքվել է օրենքով սահմանված ժամկետի խախտմամբ),
- Կապալային աշխատանքների կատարման «ԱՄ ԲԸ-ԱՇՁԲ-15/1-ԱՄ-4» պայմանագրի ու կից հավելվածների կնքման ամսաթիվը և ամիսը նշված տարբերակը.
- Տեխնիկական միջոցների մասին տեղեկանքի (Հավելված 5.1) ճշտված տարբերակը.

Վերոհիշյալ արձանագրության 2.2-րդ կետով արձանագրվել է, որ «Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ի կողմից ներկայացրած՝ որպես հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացված համանման (նմանատիպ) պայմանագրերի շրջանակներում կատարված աշխատանքների ծավալները (գները) հետևյալն են.

Պայմանագրի համարը, կնքման օրը, ամիսը, տարին	Գնման առարկայի անվանումը	Պայմանագրի ընդհանուր գինը /ՀՀ դրամ/	Պայմանագրի ընդհանուր գնից հրավերով սահմանված ժամկետում կատարված աշխատանքի գինը /ՀՀ դրամ/
«ԱՄ ԲԸ-ԱՇՁԲ-15/1-ԱՄ-4» 27.05.2015թ.	Դարակերտ համայնքի դպրոցի հիմնանորոգման աշխատանքներ	11 429 832	11 429 832
«ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/93-	Երևան քաղաքի	32 993 441	32 993 441

3» 25.05.2016թ.	Արաբկիր վարչական շրջանի հ. 25 մանկապարտեզի հիմնանորոգման աշխատանքներ		
ԿՊ -13 24.07.2013թ.	Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանի Մելքումովի փողոցի հ. 24/46 հասցեում երեք հարկանի շինության (նկուղ և երկու հարկ) կառուցման աշխատանքներ	41 239 160	18 013 861 (տարբերության չափով աշխատանքները կատարվել են 2013թ.)
06.05.2013թ.	Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Հասրաթյան փողոցի թիվ 40/5 հասցեում 3 հարկանի շենքի կառուցման աշխատանքներ	22 016 766	(աշխատանքներն ամբողջովին կատարվել են 2013թ.)
		Ընդամենը (հանրագումարը)	62 437 134

Նույն արձանագրությամբ կայացված որոշմամբ «Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ի հայտը գնահատվել է անբավարար և մերժվել այն հիմնավորմամբ, որ Ընկերության կողմից որպես հայտը ներկայացնելուն տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացված համանման (նմանատիպ) պայմանագրերի շրջանակներում կատարված աշխատանքների ծավալների հանրագումարը պակաս է հրավերով սահմանված չափից:

Այսպիսով, անդրադառնալով Ընկերության կողմից ներկայացված «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթղթերի՝ հրավերի պահանջներին համապատասխանության հարցին, Խորհուրդը հայտնում է հետևյալը.

Ընթացակարգի հրավերը սահմանում է, որ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) Մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն (Հավելված 3.1), որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում Մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում Մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից: Նմանատիպ են համարվում սույն հրավերով պահանջվող լիցենզիայի (ներդիրների) շրջանակներում բնակելի, հասարակական և արտադրական շենքերի ու շինությունների շինարարական աշխատանքների (այդ թվում հիմնանորոգման-վերակառուցման) նախկինում կատարված պայմանագրերը:

2) առաջին տեղը զբաղեցրած Մասնակիցը որպես սույն պարբերության 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշի հիմնավորող փաստաթուղթ ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

4) Մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն պարբերությամբ նախատեսված պահանջները:

Ընկերությունը հայտի թիվ 4 հավելվածով ներկայացրել է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած գնային առաջարկ, որի ընդհանուր գինը կազմել է ***203 500 000 ՀՀ դրամ:***

Որպես «Մասնագիտական փորձառություն» չափանիշը հիմնավորող փաստաթուղթ «Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված պայմանագրերից՝

• «Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ի և քաղաքացի Միքայել Շադոյանի միջև **06.05.2013թ.** կնքված շինարարական կապալի պայմանագրով (այսուհետ նաև՝ Պայմանագիր 1) Ընկերությունը պարտավորվել է պատվիրատուի հանձնարարությամբ կատարել 3 հարկանի շենքի կառուցապատման աշխատանքներ Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Հասրաթյան փողոցի թիվ 40/5 հասցեում և կառույցը հանձնել պատվիրատուին, իսկ պատվիրատուն պարտավորվել է ընդունել աշխատանքի արդյունքը և վարձատրել դրա համար:

Պայմանագրի 4-րդ կետի 4.1 ենթակետի համաձայն՝ պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **22 016 766 ՀՀ դրամ:**

Ընդ որում կախված շինարարական ծավալի աճից կամ նվազումից վերը նշված գումարը ենթակա է փոփոխման:

Պայմանագրի 5-րդ կետի 5.1 և 5.2 ենթակետերի համաձայն՝

5.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում երկու կողմերի ստորագրելու պահից և գործում է մինչև Պատվիրատուի կողմից շինարարության արդյունքի ընդունումը:

5.2. Աշխատանքների կատարման ժամկետն է մեկ տարի:

Համաձայն Պայմանագիր 1-ի շրջանակներում 30.09.2013թ. կազմված հանձնման-ընդունման թիվ 1 արձանագրության՝ Ընկերությունը 06.05.2013թ.-30.09.2013թ. ընկած ժամանակա-հատվածում իրականացրել է Պայմանագիր 1-ով նախատեսված կապալային աշխատանքների՝ 12 219 307 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ համապատասխան մասը:

• Համաձայն Պայմանագիր 1-ի շրջանակներում 30.11.2013թ. կազմված հանձնման-ընդունման թիվ 2 արձանագրության՝ 06.05.2013թ.-30.11.2013թ. ընկած ժամանակահատվածում Ընկերությունն իրականացրել է Պայմանագիր 1-ով նախատեսված կապալային աշխատանքների՝ 5 155 506 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ համապատասխան մասը:

Պայմանագիր 1-ի 20.02.2013թ. հանձնման-ընդունման թիվ 3 արձանագրության համաձայն 06.05.2013թ.-30.09.2013թ. ընկած ժամանակահատվածում Ընկերությունն

իրականացրել է Պայմանագիր 1-ով նախատեսված կապալային աշխատանքների 4 641 954 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ համապատասխան մասը:

Ընդ որում նշված արձանագրության մեջ որպես աշխատանքների կատարման ժամկետ նշված է 20.04.2014թ. և որպես վճարման ժամկետ նախատեսված է՝ 28.02.2014թ.:

Ընկերության կողմից ներկայացվել են Պայմանագիր 1-ի շրջանակներում 21.10.2013թ. դուրս գրված թիվ Ա1485149511 (12 219 307.2 ՀՀ դրամ), 30.01.2014թ. դուրս գրված թիվ Ա0077164033 (5 155 506 ՀՀ դրամ), 10.03.2014թ. դուրս գրված Ա1909190626 (4 641 954 ՀՀ դրամ) հաշիվ-ապրանքագրերի պատճենները:

Այսպիսով՝ Պայմանագիր 1-ը կնքվել է 06.05.2013թ., միևնույն ժամանակ կապալային աշխատանքների կատարման համար սահմանվել է մեկ տարի ժամկետ: Համաձայն Պայմանագիր 1-ի կողմերի միջև կնքված արձանագրությունների՝ նշված պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվել և վերջնականորեն ընդունվել են պատվիրատուի կողմից 2014թ. ընթացքում: Հետևաբար, Խորհուրդն արձանագրում է, որ Պայմանագիր 1-ը կատարվել է 2014 թվականին, քանի որ պայմանագրի առարկա հանդիսացող օբյեկտի շինարարությունն ավարտվել և վերջնական արդյունքը հանձնվել է (պայմանագրային պարտավորությունները պատշաճ կատարվել են) պատվիրատուին 2014թ.:

Ինչ վերաբերում է Պայմանագիր 1-ի հանձնման-ընդունման թիվ 3 արձանագրության մեջ տեղ գտած ամսաթվերի անհամապատասխանությանը, ապա հաշվի առնելով այն հանգամանքը, որ պայմանագիր 1-ի կատարման թիվ 1 և 2 հանձնման-ընդունման արձանագրությունները կազմվել են համապատասպանաբար 30.09.2013թ. և 30.11.2013թ., ուստի թիվ 3 հանձնման-ընդունման արձանագրությունը, որով ամրագրվել է ըստ էության Պայմանագիր 1-ով նախատեսված կապալային աշխատանքների կատարման վերջին փուլը՝ աշխատանքի ավարտը և պատվիրատուի կողմից պայմանագրի առարկայի ընդունումը օբյեկտիվորեն չէր կարող նախորդել Պայմանագիր 1-ով նախատեսված աշխատանքների կատարման առաջին փուլին: Հետևաբար հաշվի առնելով քննարկվող արձանագրության մեջ տեղ գտած անհամապատասխանութ-

յունները, Խորհուրդը որպես աշխատանքների կատարման ժամկետ (ավարտ) հիմք է ընդունում թիվ 3 հանձնման-ընդունման արձանագրության մեջ նշված **20.02.2014թ.:**

Բացի այդ Պայմանագիր 1-ի 4-րդ կետի 4.3 ենթակետը սահմանում է, որ պատվիրատուն աշխատանքների կատարման համար կապալառուին պարտավորվում է վճարել կանխավճար՝ պայմանագրային արժեքի 50 %-ի չափով: ***Մնացած գումարը վճարում է ըստ ամսեկան ներկայացված կատարողական ակտի***, որը պակասեցվում է 50 %-ի չափով ւ հաշիվ կանխավճարի:

Համաձայն վերը նշված դրույթի՝ պատվիրատուի կողմից համապատասխան վճարումը կատարվում է ըստ ամսեկան ներկայացված կատարողական ակտի:

Պայմանագիր 1-ի հանձնման-ընդունման թիվ 3 արձանագրության մեջ նշվել է, որ վճարման ենթակա գումարը կազմում է 4 641 954 ՀՀ դրամ, որի համար 10.03.2014թ. դուրս է գրվել 4 641 954 ՀՀ դրամի թիվ Ա1909190626 հաշիվ-ապրանքագիրը, ինչը ևս մեկ անգամ հավաստում է այն փաստը, որ Պայմանագիր 1-ի հանձնման-ընդունման թիվ 3 արձանագրությամբ նախատեսված աշխատանքները կատարվել են 2014 թվականին:

- «Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ի և քաղաքացի Կարեն Յավրյանի (պատվիրատու) միջև **24.07.2013թ.** կնքված շինարարական կապալի թիվ ԿՊ 13 պայմանագրով (այսուհետ նաև՝ Պայմանագիր 2) Ընկերությունը պարտավորվել է պատվիրատուի հանձնարարությամբ կառուցել երեք հարկանի շինություն (նկուղ և երկու հարկ) Երևան քաղաքի Դավիթաշեն վարչական շրջանի, Մելքումովի փող. Հ. 24/46 հասցեում և հանձնել պատվիրատուին, իսկ պատվիրատուն պարտավորվել է ընդունել աշխատանքի արդյունքը և վարձատրել դրա համար:

Պայմանագիր 2-ի 3-րդ կետի 3.1 կետի համաձայն՝ պայմանագրի ընդհանուր արժեքը կազմում է **41 239 160 ՀՀ դրամ:**

Ընդ որում կախված շինարարական ծավալի աճից կամ նվազումից վերը նշված գումարը ենթակա է փոփոխման:

Նույն պայմանագրի 4-րդ կետի 4.1 և 4.2 ենթակետերի համաձայն՝

4.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում երկու կողմերի ստորագրելու պահից և գործում է մինչև Պատվիրատուի կողմից շինարարության արդյունքի ընդունում:

4.2 **Աշխատանքների կատարման ժամկետն է մեկ տարի:**

Պայմանագիր 2-ի 30.09.2013թ. թիվ 1 հանձնման-ընդունման արձանագրության համաձայն՝ Ընկերությունը պայմանագրի շրջանակներում 25.07.2013թ-30.09.2013թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է պայմանագրով նախատեսված աշխատանքների ընդհանուր ծավալից 4 212 217 ՀՀ դրամ արժողությամբ աշխատանք:

Պայմանագիր 2-ի 30.11.2013թ. թիվ 2 հանձնման-ընդունման արձանագրության համաձայն՝ Ընկերությունը պայմանագրի շրջանակներում 30.09.2013թ.-30.11.2013թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է պայմանագրով նախատեսված աշխատանքների ընդհանուր ծավալից 11 418 224 ՀՀ դրամ արժողությամբ աշխատանք:

Պայմանագիր 2-ի 13.03.2014թ. թիվ 3 հանձնման-ընդունման արձանագրության համաձայն՝ Ընկերությունը պայմանագրի շրջանակներում 30.11.2013թ.-13.03.2014թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է պայմանագրով նախատեսված աշխատանքների ընդհանուր ծավալից 7 497 535 ՀՀ դրամ արժողությամբ աշխատանք:

Պայմանագիր 2-ի 30.04.2014թ. թիվ 4 հանձնման-ընդունման արձանագրության համաձայն՝ Ընկերությունը պայմանագրի շրջանակներում 13.03.2014թ.-30.04.2014թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է պայմանագրով նախատեսված աշխատանքների ընդհանուր ծավալից 6 304 249 ՀՀ դրամ արժողությամբ աշխատանք:

Պայմանագիր 2-ի 21.07.2014թ. թիվ 5 հանձնման-ընդունման արձանագրության համաձայն՝ Ընկերությունը պայմանագրի շրջանակներում 30.04.2014թ.-21.07.2014թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է պայմանագրով նախատեսված աշխատանքների ընդհանուր ծավալից 6 522 804 ՀՀ դրամ արժողությամբ աշխատանք:

Պայմանագիր 2-ի 24.07.2014թ. թիվ 6 հանձնման-ընդունման արձանագրության համաձայն՝ Ընկերությունը պայմանագրի շրջանակներում 14.07.2014թ-22.09.2014թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է պայմանագրով նախատեսված աշխատանքների ընդհանուր ծավալից 5 186 808 ՀՀ դրամ արժողությամբ աշխատանք:

Ընկերության կողմից ներկայացվել է Պայմանագիր 2-ի շրջանակներում դուրս գրված 21.10.2013թ. թիվ Ա3781589105 (4 212 316.8 ՀՀ դրամ), 30.01.2014թ. թիվ Ա8735716133 (11 418 224.4 ՀՀ դրամ), 14.03.2014թ. թիվ Ա8724199173 (7 495 534.96 ՀՀ դրամ), 12.05.2014թ. թիվ Ա6940689004 (6 304 249.2 ՀՀ դրամ), 21.07.2014թ. թիվ Ա2448892020

(6 522 804 ՀՀ դրամ), 22.09.2014թ. թիվ Ա3468872021 (5 186 808 ՀՀ դրամ) հաշիվ-ապրանքագրերի պատճենները:

Այսպիսով Խորհուրդը տվյալ պարագայում ևս արձանագրում է, որ «Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ի և քաղաքացի Կարեն Յավրյանի միջև 24.07.2013թ. կնքված թիվ ԿՊ 13 պայմանագիրը կատարվել է 2014թ., քանի որ համաձայն Պայմանագրի հանձնման-ընդունման ակտերի՝ պայմանագրի առարկա Երևան քաղաքի Դավիթաշեն վարչական շրջանի Մելքումովի փող. Հ. 24/46 հասցեում երեք հարկանի շինության (նկուղ և երկու հարկ) կառուցումը ավարտվել և ընդունվել է (պայմանագրային պարտավորությունները կատարվել են) պատվիրատուի կողմից 2014 թվականի ընթացքում:

Հետևաբար Խորհուրդը գտնում է, որ «Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ի և քաղաքացի Կարեն Յավրյանի միջև 24.07.2013թ. կնքված թիվ ԿՊ 13 պայմանագիրը հանդիսանում է 2014թ. ընթացքում պատշաճ կատարված պայմանագիր:

• Երևանի քաղաքապետարանի և «Տրանսունիվերսալ» ՍՊԸ-ի միջև 24.05.2016թ. կնքված թիվ «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/93-3» պայմանագրով (այսուհետ նաև՝ Պայմանագիր 3) Ընկերությունը պարտավորվել է պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի հ. 25 մանկապարտեզի հիմնանորոգման աշխատանքները, իսկ պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը:

Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետը սահմանվել է մինչև 25.08.2016թ.:

• Պայմանագիր 3-ի 5-րդ կետի 5.1 ենթակետի համաձայն՝ պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **32 993 441.0** ՀՀ դրամ:

Պայմանագրի 8-րդ կետի 8.2 ենթակետի համաձայն՝ պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Նույն կետի 8.7 ենթակետը սահմանում է, որ աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի

կողմից առաջարկության դեպքում՝ պայմանով, որ պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկային օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

Պայմանագիր 3-ի՝

- 14.06.2016թ. կնքված թիվ 1 հանձնման-ընդունման արձանագրության համաձայն՝ Ընկերությունը պայմանագրի շրջանակներում 24.05.2016թ.-14.06.2016թ. ընկած ժամկահատվածում կատարել է 2 480 844 ՀՀ դրամի աշխատանք.

- 14.07.2016թ. կնքված թիվ 2 հանձնման-ընդունման արձանագրության համաձայն՝ Ընկերությունը պայմանագրի շրջանակներում 14.06.2016թ.-14.07.2016թ. ընկած ժամկահատվածում կատարել է 5 054 424 ՀՀ դրամի աշխատանք.

- 17.08.2016թ. կնքված թիվ 3 հանձնման-ընդունման արձանագրության համաձայն՝ Ընկերությունը պայմանագրի շրջանակներում 15.07.2016թ.-17.08.2016թ. ընկած ժամկահատվածում կատարել է 7 428 549 ՀՀ դրամի աշխատանք.

Կողմերի միջև 25.08.2016թ. կնքված N 1 համաձայնագրով Պայմանագիր 3-ով նախատեսված աշխատանքների կատարման վերջնաժամկետը սահմանվել է 15.09.2016թ.:

- 02.09.2016թ. կնքված թիվ 4 հանձնման-ընդունման արձանագրության համաձայն՝ Ընկերությունը պայմանագրի շրջանակներում 18.08.2016թ.-02.09.2016թ. ընկած ժամկահատվածում կատարել է 16 168 944 ՀՀ դրամի աշխատանք.

- 14.09.2016թ. թիվ 5 հանձնման-ընդունման արձանագրության համաձայն՝ Ընկերությունը պայմանագրի շրջանակներում 03.09.2016թ.-14.09.2016թ. ընկած ժամկահատվածում կատարել է 1 844 680 ՀՀ դրամի աշխատանք:

15.09.2016թ. հաստատվել է ավարտված շինարարական օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտը:

Ընկերության կողմից ներկայացվել են Պայմանագիր 3-ի շրջանակներում դուրս գրված 14.06.2016թ. թիվ Ա4645092211 (2 480 844 ՀՀ դրամ), 14.07.2014թ. թիվ Ա2362537861 (5 054 424 ՀՀ դրամ), 17.08.2016թ. թիվ Ա2872404161 (7 428 549 ՀՀ դրամ),

02.09.2016թ. թիվ Ա2558533020 (16 184 944 ՀՀ դրամ), 20.09.2016թ. թիվ Ա0261686467 (1 844 680 ՀՀ դրամ) հաշիվ-ապրանքագրերի պատճենները:

Այսպիսով ուսումնասիրելով Երևանի քաղաքապետարանի և «Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ի միջև 24.05.2016թ. կնքված թիվ «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/93-3» պայմանագիրը, Խորհուրդը գտնում է, որ այն պետք է դիտարկել որպես պատշաճ կատարված պայմանագիր, քանի որ Ընկերությունը սահմանված կարգով պատշաճ ամբողջ ծավալով իրականացրել է պայմանագրով նախատեսված աշխատանքները և արդյունքը հանձնվել և ընդունվել է պատվիրատուի՝ տվյալ դեպքում Երևանի քաղաքապետարանի կողմից:

Ինչ վերաբերում է պայմանագրով նախատեսված ժամկետը երկարաձգելու վերաբերյալ պայմանագրում փոփոխություն կատարելու մասին թիվ 1 համաձայնագրին, ապա ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 468-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի փոփոխման կամ լուծման համաձայնությունը կնքվում է այն ձևով, ինչով պայմանագիրը, եթե այլ բան չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պայմանագրից կամ գործարար շրջանառության սովորույթներից:

Կարգի 65-րդ կետը սահմանում է, որ մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Խորհուրդը գտնում է, որ Կարգի 65-րդ կետի տեսանկյունից Պայմանագիր 3-ը դիտարկվում է որպես պատշաճ կատարված, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը պայմանագրով և այնուհետև դրան կից համաձայնագիր N 1-ով նախատեսված ժամկետներում պատշաճ ամբողջ ծավալով իրականացրել է պայմանագրի առարկան՝ օբյեկտի շինարարական աշխատանքները և որը ընդունվել է պատվիրատուի կողմից և որի համար պատվիրատուն վճարել է պայմանագրով նախատեսված գինը:

• ՀՀ Արարատի մարզպետարանի և «Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ի միջև 27.05.2015թ. կնքված թիվ «ԱՄ-ԲԸ-ԱՇՁԲ-15/1-ԱՄ-4» պայմանագրով (այսուհետ նաև՝ Պայմանագիր 4) Ընկերությունը պարտավորվել է պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել նույն պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված «Դարակերտ համայնքի դպրոցի

հիմնանորոգում» աշխատանքները, իսկ պատվիրատուն պարտավորվել է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

Պայմանագիր 4-ի 5-րդ կետի 5.1 ենթակետի համաձայն՝ պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 11 429 832 ՀՀ դրամ:

Պայմանագրով նախատեսված ժամկետը սահմանվել է մինչև 15.11.2015թ.:

Պայմանագիր 4-ի՝

- 16.07.2015թ. կնքված թիվ 1 հանձնման-ընդունման արձանագրության համաձայն՝ Ընկերությունը 27.05.2015թ.-13.07.2015թ. ընկած ժամանակահատվածում պայմանագրի շրջանակներում կատարել է 5 074 686 ՀՀ դրամի աշխատանք.

- 12.08.2015թ. կնքված թիվ 2 հանձնման-ընդունման արձանագրության համաձայն՝ Ընկերությունը 13.07.2015թ.-12.08.2015թ. ընկած ժամանակահատվածում պայմանագրի շրջանակներում կատարել է 4 064 070 ՀՀ դրամի աշխատանք.

- 31.08.2015թ. կնքված թիվ 3 հանձնման-ընդունման արձանագրության համաձայն՝ Ընկերությունը 12.08.2015թ.-22.08.2015թ. ընկած ժամանակահատվածում պայմանագրի շրջանակներում կատարել է 2 063 200 ՀՀ դրամի աշխատանք:

- 06.11.2015թ. կնքված թիվ 4 հանձնման-ընդունման արձանագրության համաձայն՝ Ընկերությունը 06.11.2015թ. դրությամբ կատարել է 227 878 ՀՀ դրամի աշխատանք:

Ընկերության կողմից ներկայացվել են Պայմանագիր 4-ի շրջանակներում դուրս գրված 16.07.2015թ. թիվ Ա0639613910 (5 074 686 ՀՀ դրամ), 12.08.2015թ. թիվ Ա1525846478 (4 064 070 ՀՀ դրամ), 31.08.2015թ. թիվ Ա4931380428 (2 063 200 ՀՀ դրամ), 12.11.2015թ. թիվ Ա9697644857 (227 878 ՀՀ դրամ) հաշիվ-ապրանքագրերի պատճենները:

Այսպիսով ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 65-րդ կետի 1-ին, 3-րդ և 4-րդ ենթակետերի համաձայն՝ Մասնակիցների, օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա

ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից.

2)...»

3) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը՝ որպես սույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը.

4) մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:

Ընկերությունը որպես հրավերով նախատեսված «Մասնագիտական փորձառություն» չափանիշը հիմնավորող փաստաթղթեր ներկայացրել է թվով չորս պայմանագրեր, որոնց արժեքը կազմել է յուրաքանչյուրը՝ 22 016767,2 ՀՀ դրամ («Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ի և քաղաքացի Միքայել Շադոյանի միջև 06.05.2013թ. կնքված շինարարական կապալի պայմանագիր), 41 151 937.36 ՀՀ դրամ («Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ի և քաղաքացի Կարեն Յավրյանի միջև 24.07.2013թ. կնքված շինարարական կապալի թիվ ԿՊ 13 պայմանագիր), 32 993 441 ՀՀ դրամ (Երևանի քաղաքապետարանի և «Տրանսունիվերսալ» ՍՊԸ-ի միջև 24.05.2016թ. կնքված թիվ «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/93-3»

պայմանագիր), 11 429 834 ՀՀ դրամ (ՀՀ Արարատի մարզպետարանի և «Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ի միջև 27.05.2015թ. կնքված թիվ «ԱՄ-ԲԸ-ԱՇՁԲ-15/1-ԱՄ-4» պայմանագիր), ընդամենը գումարային արտահայտությամբ՝ 107 591 979,56 ՀՀ դրամ: Ընդ որում Ընկերության կողմից Ընթացակարգի մասնակցության հայտի թիվ 4 հավելվածով ներկայացվել է գնային առաջարկ, որի ընդհանուր գինը կազմել է 203 500 000 ՀՀ դրամ: Հետևաբար Կարգի 65-րդ կետի 1-ին կետի համաձայն Ընկերության կողմից ներկայացված նախկինում կատարված պայմանագրերը գումարային արտահայտությամբ (107 591 979,56 ՀՀ դրամ) պակաս չեն ներկայացված գնային առաջարկի (203 500 000 ՀՀ դրամ) հիսուն տոկոսից, ընդ որում ներկայացված պայմանագրերից «Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ի և քաղաքացի Կարեն Յավրյանի միջև 24.07.2013թ. կնքված շինարարական կապալի թիվ ԿՊ 13 պայմանագրի շրջանակներում իրականացված աշխատանքների ծավալը (41 151 937,36 ՀՀ դրամ) գումարային արտահայտությամբ, համաձայն Կարգի 65-րդ կետի 1-ին ենթակետի, պակաս չէ Ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկի քսան տոկոսից, որը տվյալ դեպքում կազմում է 40 700 000 ՀՀ դրամ (203 500 000*20%):

Այսպիսով, Խորհուրդն ուսումնասիրելով «Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ի կողմից «ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/6» ծածկագրով բաց ընթացակարգի շրջանակներում Կարգի 65-րդ կետի 3-րդ ենթակետի հիման վրա ներկայացված «Մասնագիտական փորձառություն» չափանիշը հիմնավորող պայմանագրերը, գտնում է, որ դրանք պետք է դիտարկվեն որպես հայտը ներկայացվելուն և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացված համանման (նմանատիպ) պայմանագրեր, որոնց շրջանակներում կատարված աշխատանքների հանրագումարային ծավալը գումարային արտահայտությամբ պակաս չէ Ընթացակարգի շրջանակներում Ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ պակաս չէ Ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկի քսան տոկոսից: Կարգի 65-րդ կետի 4-րդ ենթակետը սահմանում է, որ մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, Խորհուրդը գտնում է, որ «Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ի կողմից 18.08.2017թ. ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ի կողմից 18.08.2017թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացված բողոքը բավարարել՝

դադարեցնել «ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/6» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 10.08.2017թ. նիստի թիվ 10 արձանագրությամբ կայացված «Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ի հայտը արձանագրության մեջ նշված հիմնավորմամբ «Մասնագիտական փորձառություն» չափանիշին չհամապատասխանելու հիմքով մերժելու մասին որոշումը:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի անդամ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**